գաւառախականների կողմից, որոնք, սովորաբար, մնում էին անպատիժ իրենց արարքների համար: Անտանելի էր հայերի դրութիւնը, մանաւանդ, հայկական սահմանին մօտ գտնուող վայրերում, ուր ճնշումներն ու կամայականութիւնները պատերազմից յետոյ էլ չվերջացան: Այսպէս, Բոլնիս-Խաչէն գիւղը վրաց զօրքի կողմից գրաւելու ժամանակ, բնակիչները թողին-հեռացան՝ չկարողանալով տանել որեւէ բան: Գիւղում մնացին մի քանի չքաւոր ընտանիքներ, ծերեր ու որբեւայրիներ: Գիւղը գրաւելուց յետոյ կարմիր գաւառախականները անցան թալանի ու բռնութիւնների: Թալանեցին ամէն ինչ, ուտելեղէնը տարին կազմակերպուած կերպով: Տարին հաց, ցորեն, գարի, գետնախնձոր, լոբի, ընկոյզ, հագուստ, կարի մեքենայ, պղնձեղէն, երկրագործական պիտոյքներ, արծաթ եւ ոսկի իրեր, կահ-կարասիք, նոյնիսկ բարձերի փետուրը թափեցին եւ կտորը տարին: Ինչ որ չկարողացան տանել, ոչնչացրին: Փչացրին տների դռները, պատուհանները, կարասիքը, մեղրի փեթակները: Տարին կենդանիները՝ կով, ձի, եզ, գոմէշ, ոչխար, հաւ, սագ: Զինուորներն ու սպաները խմում էին գինի եւ օղի, քէֆ էին անում. բռնաբարում էին գիւղում մնացած կանանց եւ աղջիկներին: Յետոյ, բոլոր գիւղացիներին, առանց սեռի եւ հասակի խտրութեան, հաւաքեցին մի նկուղ եւ պահեցին իբրեւ գերի: Կանանց մի քանի օրից յետոյ բաց թողին, իսկ այր մարդկանց պահեցին երկու շաբաթ եւ ազատ արձակեցին միայն յունիս 13-ին: Այդ երկու շաբաթուայ ընթացքում գիւղը մաքուր կերպով թալանեցին ու հաւաքուած իրերը փոխադրեցին Եկատերինֆելդ, այնտեղից էլ Թիֆլիս:

Յունիս 18-ին Բելիյ-Կլիւչ մտաւ վրացական 2րդ հեծեալ գունդը, որից յետոյ սկսեցին բռնութիւններն ու թալանը: Զինուորները զանազան պատրւակներով մտնում էին գիւղացիների տները եւ առնում աչքը տեսածը: Ամենից առաջ թալանեցին բոլոր հայ գաղթականներին. բռնաբարում էին կանանց: Գիւղացիները գանգատուեցին շրջանի կոմիսարին եւ զօրամասի պետին—ապարդիւն: Բելիյ-Կլիւչից թալանը տարածուեց եւ շրջանի գիւղերը՝ Սամղրէթ, Վայխուն, Շամշուլդա, ուր տեղի ունեցան ծեծ ու բռնութիւն:

Սակայն, ամենազզուելի դէպքը պատահեց Բելիյ-Կլիւչի կենտրոնը գտնուող ամառանոցում. գիշերուայ ժամը 1-ին մի խումբ զինուորներ մտան որբանոց եւ կին պահանջեցին իրենց համար: Որբանոցի ծառայող չափահաս կանայք փախան: Զինուորները սկսեցին ծեծել որբերին եւ պահանջել, որ ցոյց տան փախածների տեղը: Ապա բռնաբարեցին 10—12 տարեկան երկու որբուհիներ ու հեռացան: Երկու օր յետոյ կրկնուեց նոյն պատմութիւնը. դարձեալ ծեծ ու բռնաբարութիւն: Որբանոցի վարչութիւնը դիմեց տեղական իշխանութեան, բայց այդ դիմումը թողնուեց անհետեւանք:

Այսպիսի քստմնելի տեսարաններով լեցուն են Թիֆլիսի ա՛յն օրերի մամուլի էջերը, բայց գիրքը չծանրաբեռնելու համար՝ սահմանափակենք այսքանով: Այս անտանելի դրութիւնը ստիպեց Վրաստանի Խորհրդարանի հայ պատգամաւորներին հարցապնդում ուղղել կառավարութեան: Եւ ի՞նչ.